# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ Ու Մ

«18» սեպտեմբերի 2024թ. N ՄՈ/444-Ա

ք. Արմավիր

### «ԱՐՇԱԼՈՒՅՍԻ Ս.ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2024 թվականի սեպտեմբերի 17-ի N ՄՈ/439-Ա և N ՄՈ/440-Ա որոշումները, «Արշալույսի Ս.Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում փաստաթղթերի հանձնման-ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով.

**որոշում եմ՝**

1. Ստեղծել հանձնաժողով՝ հպմաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովին (Ն.Ալավերդյան)՝ հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել «Արշալույսի Ս.Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հաշվապահ Մարիաննա Պողոսյանին (համաձայնությամբ):

3. Հանձնաժողովին (Ն.Ալավերդյան)՝ սույն որոշմամբ նախատեսված աշխատանքնե իրականացնել հինգ աշխատանքային օրվա ընթացքում և արդյունքների մաս զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազ ֆինանսական վարչությանը (պետ Վ. Մկրտչյան)՝ սահմանված կարգով իրականաց գործուղման ծախսերի վճարումը:
5. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի անձնակազմի կառավարմա փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչությա (գլխավոր մասնագետ Ա. Համբարձումյան)՝ աշխատանքներն իրականացնելու համ ապահովել հերթապահ մեքենայի տրամադրումը:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2024-09-16 16:33:18 GMT+4
Հաստատված է ԷԿԵՆԳ-ի կողմից

eID

**ՄԱՐԶՊԵՏ՝ Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

**Հավելված**

**Հայաստանի Հանրապետության**

**Արմավիրի մարզպետի**

**2024 թվականի** նոյեմբերի 18 **ի**

**N ՄՈ/** 444 **-Ա որոշման**

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

**Հանձնաժողովի նախագահ՝**

| | |
|---|---|
| Ն.Ալավերդյան - | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության ավագ մասնագետ |

**Անդամներ՝**

| | |
|---|---|
| Ս.Ղուկասյան - | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ |
| Ջ. Եղոյան- | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության գլխավոր մասնագետ |

**Հանձնող՝**

| | |
|---|---|
| Մարիամ Հովսեփյան- | «Արշալույսի Ս.Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն |

**Ընդունող՝**

| | |
|---|---|
| Լիլիկ Մուրադյան- | «Արշալույսի Ս.Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ |

**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝**

**Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 18.09.2024 16:19:06 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023